

ՔԱՆՆԵՐ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԷՃ.
Վ. Գաւառաց 10 ՄԷՃ.
Վ. Կապուսեայ Կ. Պոլսոյ 4 ՄԷՃ.
Վ. Գաւառաց 5 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.
Յանուարի ամիսը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կրկայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեքշաբթի 20 դեկտ.

Այսօր քաղաքիս վառօդարանին վրայ
կայծակ իջնելով՝ սարսափելի պայթմամբ
վառօդարանը նետուեցաւ և բազմաթիւ
տուներ կործանեցան: 200ի չափ ալ մար-
դիկ մեռան ու վիրաւորեցան:

Պէտքը 20 դեկտ.

Արեւիմ կոմսին տրուած դատաւճ-
ռոյն դէմ բողոք եղաւ առ բարձրագոյն
ատենին:

Փարիզ 21 դեկտ.

Ազգային ժողովը (դեկտ. 27 էն մին-
չեւ յունվար 2 պարապօրդէ պիտի ընէ:

Քաղաք 21 դեկտ.

Քաղաքի կառավարութիւնը կըսէ թէ
գերմանական Պալլէ իւր մը ամսոյս 11ին
փոխօրինակ բռնուելով՝ Սպանիոյ Պար-
իսիան նաւահանգիստն ապստամբիլ
ուզած ժամանակ ռաբակոնուեցաւ քա-
ղաքէն: Եւ իսկ նախքան իրաւ գերմա-
նական զօրքը կը ծածանէր: Նախքան
մէջի մարդիկն հանրապետականաց ձեռք
առնէին, մինչդեռ քաղաքէն անդա-
դար ուսմի կարծախիկն նաւուն վրայ:

Վիեննա 21 դեկտ.

Քրիտիկ-Մոսկովի խումբը Սերբիոյ
մէջ Պանքո մը հաստատուելու ձեռնար-
կութեան հետ կեցաւ:

Անտարտիկ կամը նախարարական տաղ-
նապին լուծում մը գտնելու համար Բէ-
թա վերադարձաւ:

Փարիզ 21 դեկտ.

Լրագիրը կը պարտաւեն Արեւիմ կոմ-
սին վարմունքը:

Հոտ 21 դեկտ.

Պատը բազմաթիւ խառնաշփոթ և Աւս-
տրիոյ երկրորդական ձեռնարկը:

Լոնտոն 19 դեկտ.

Ուսմ. Բոնա. 44 13/16
Փոխ. 1863 68 1/2
» 1869 54 1/2—3/4
» 1874 63 1/2
» 1872 84 1/2—85
» 1873 51 7/8

Նոր փոխառութիւն 1 1/4
Անգլ. Բոնա. 92 1/8

Լիւբլյան 19 դեկտ.

Բամպակ Միւլինի—Օրլան 7 3/4—
» Պայր Տօլերա 4 7/8—5
Ծախում 12000 հոկ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ
Խաղաղարի կառավարիչ Պաղլը
փաշային ֆէրիդի աստիճան և երկ-
րորդ կարգի Օսմանիէ պատուանդ-
չան տրուեցաւ, և Խաղաղարի բո-
լոր պահականոցներն ալ անոր հրա-
մանին ներքեւ կրուեցան:
Դարձեալ կայսերական հրամանաւ
Մաքսուտեան վսեմ: Սիմօն պէ-
յին Խաղաղարի աստիճան տրե-
ւեցաւ:
Արքեպիսկոպոսի աւագանին

ճարտարապետ վառիլ էֆենտիին իւ-
լայի երկրորդ աստիճան տրուեցաւ:

Ոստիկանութեան նախարար վը-
սեմ. Հիւսնի փաշան կիրակի օրն ար-
քունի պալատը կանչուելով՝ վեհ-
օրութեանին ներկայանալու խառնի-
ռուեցաւ:

Կըլենք թէ փոքր Սիւրի սովատանջ
ժողովրդոց օգնութեան համար Անդ-
րազանի եկած հանգանակութեան
դուամբէն 530 անգղիական ոսկի զը-
կուեր է Մեծ. Մ. Թոմսըն անգղիա-
ցի վաճառականին ձեռնարկ: Սիւրի-
հիսարի Հայոց թաղ. խորհրդոյ Ասե-
նապետ Մեծ. Չէքչեան Մ. Ստեփան
աղային, որպէսզի տեղւոյն սովատանջ
կարօտեցող բաշխէ առանց կրօնի և
ազգի խտրութեան:

Այս մարդասիրական գործին
պատճառ եղած է վերջիւստ Մ.
Ստեփան աղան՝ յատկապէս գիր-
դերով առ Մ. Թոմսըն, և տեղւոյն
ժողովրդեան թշուառ վիճակին կա-
րեկցութիւն խնդրելով: Հետեւաբար
երկուքն ալ միապէս շնորհակալու-
թեան արժանի են:

Երկուշաբթի օրը Գասթըմ փաշա-
յի Եֆենի Չէքչեմ թաղը հրդեհ հա-
տահերով հինգ տուն այրեցաւ:

Ուրբաթ օրը Պեյլիւքտէրէ Մալ-
թէզադ ծովեզը կատաղի կռիւ մե-
լաւ Բաւարացի և Հիւսարցի նաւաստ-
եաց մէջ, և մինչև որ ոստիկանու-
թեան զինուորներն հասան, բազմա-
թիւ մարդիկ վիրաւորեցան երկու
կողմէ և մէկն ալ մեռաւ:

Ագրիանուպօլոս լրագիրը կը
ծանուցանէ թէ ասիէց չորս տարի
առաջ Մուսթաֆա անուն Կիրիտցի
վաճառական մ'առեւ տրական գոր-
ծոց պատճառաւ Ագրիանուպօլոս
երթալով, յանկարծ անցայտ եղեր
է քաղաքէն, և ինչ եղած ըլլալը չէ
կրցեր իմացուիլ, թէ և տեղական
իշխանութիւնը շատ խուզարկութիւն
ըրեր է:

Սակայն այս օրերս կուսակալը
գաղտնի տեղեկութիւններ ստա-
նալով, գործն երեւան ելեր է:

Յիշեալ Կիրիտցի վաճառականը
վրան մեծագույն ոսկի ունենալով
բերքին մէջ գտնուած Պուրդարաց
գաղտնի մէջիւր ընդունուեր է, և
առատ կերակրէ մեռաւ, երբոր իրեն
համար պատրաստուած սննեակը
քաղաքէն մեջեր է, հիւրընկալները
գնացեր անոր ոտքը ձեռքը կապեր,
և խեղդամահ ընելով գաղտնի բա-
կին մէջ գտնուած ջրհորը նետեր են:
Ժամանակէ մ'եռա ալ գիւղին այն
ջրհորէն հաներ ուրիշ ջրհոր մը նե-
տել տուեր են գաղտնաբար և վրան
աղտնիութիւն լցուցեր են:

Հիմա կուսակալն այս վերջին ջրհորը
մաքրել տալով Կիրիտցիին կմախքը
գտնուեր է, և ոճրագործութեան
կասկածեալ հեղինակները բռնուելով
դատաստանի յանձնուեր են:

Բուժէլի երկաթուղեաց ընկերու-
թիւնը տուար կրելու համար բազ-
մաթիւ ընդարձակ կառքեր (վալոն)
բերել տուաւ Եւրոպայէն:

Մուստեֆայէն Պրուսա շինուած
երկաթուղին քիչ օրէն աւարտելու
վրայ է: Հետեւաբար կը յուսացուի
որ յառաջիկայ գարնան բանիլ կըս-
կըն:

Թուրքաստանէն եկած լուրերը
կը ծանուցանեն թէ Քաշկարի Եւ-
դուպ խանն արտաքոյ կարգի Եւս-
պան մը պիտի զրկէ Բեդրապուրկ՝
Ռուսաց Ալէքսանդր կայսեր պաշտ-
պանութիւնը հայցելու ֆաշկարի խա-
նութեան վրայ, և միանգամայն
Ռուս վաճառականաց կարավաննե-
րուն կողոպտման փոխարէն պահան-
ջուած դէմական տուգանաց շնոր-
հումը խնդրելու:

ԴՐԱՄԱՆՆ

Մայրաքաղաքիս Լէվընթէ Էրըլտ
և Լա Թուրքի լրագիրներն այս օրե-
րը կայսերական տէրութեան եւ-
մտական վիճակն իրենց խորհրդա-
ծութեանց նիւթ ընելով, քանձուն
եղամուտքն հաւասարակուելու մի-
ջոցներ ցոյց կուտան, միջոցներ, որք
ըստ տնտեսական օրինաց՝ ամենէն
բանաւորն և միանգամայն հնարու-
ւորը կրնան համարուիլ:

Գանձուն բացը գոցելու համար,
կըսեն յիշեալ երկու լրագիրք, կա-
ռավարութիւնը պէտք է բաց
պարտքն անմիջապէս քօնսօլիտէի
վերածէ, և անոր առիթովն ևս գըլ-
խալմարին համապատասխանող հա-
տատուն եկամուտ մը գտնելով՝
գանձուն հաշուեցոյցին մէջ անցու-
նէ: Օրինակի համար, եթէ 10 մի-
լիոն լիւր բաց կայ, փոխանակ առ-
ժամանակեայ փոխառութիւնները
ընելով գոցելու, քօնսօլիտէի վերա-
ծել և անոր առիթով վճարելու հա-
մար պէտք եղած 1 միլիոնը հոգալ
այս ալ ոչ թէ կեղակարծ միջոցնե-
րով, այլ իրական, շոյափելի և հրա-
պարակին մէջ ալ արժէք ունեցող
միջոցներով:

Այս իրական եկամուտ աղբիւր-
ներուն գլխաւորներն են ծխախոտն
և սկիւրի ըմպելիները, որք ուրիշ
տէրութեանց մէջ առատ հասցիթ
կուտան կառավարութեան, իսկ հոս
ընդհանրապէս՝ ծխախոտի տուրքն
այնպիսի վիճակի մէջ գրուած է, որ
տէրութեան գանձուն հասցիթը չաւել-
ցնելէ զատ, մշակութիւնն ու փո-

խաղըութիւնն ալ դժուարացուցած
է: Եթէ այս տուրքը ձեռնհաս ընկե-
րութեան մը ձեռք արուի, և արեւ-
տեսական կանոնաց համեմատ մա-
տակարարի, գանձուն բացը կրնայ
թէ ոչ բողոքովն՝ գոնէ մեծ մա-
սամբ գոցել:

Գալով ոգելից՝ ըմպելեաց տուրքին,
որ ուրիշ տէրութեանց մէջ նոյնպէս
եկամուց ամենառատ աղբիւր մ'է:
Հոս ալ կրնայ նոյն աղբիւնաւորու-
թիւնն ունենալ իմաստուն մատա-
կարարութեամբ: Եթէ օտար տէ-
րութեանց հետ կնքուած դաշնագ-
րութիւնք արգելք ըլլան, Բ. Դուռը
կրնայ իրաւամբ անոնց փոփոխութիւն
պահանջել: Երբեք ևս այն դաշնագ-
րութեանց պատան Օտար հպատա-
կաց կեանքը, գոյքն ու առուտուրը
պաշտպանել է, և ոչ թէ Բ. Դուռն
իւր տնտեսական արգար անկախու-
թեան զրկել:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍՏԱՅԸ ՈՒՍՈՒՄԻՆԷ

11 դեկտ.	Կորեքաթի իրիկուն	49 25
12 »	Հինգշաբթի ամառու բացուեցաւ	49 22
	Կէս օր	49 21

Կ. Պոլս 11 դեկտ.

Սօսիթիէ Թէնէրալի բաժնիք Անգլ. լիւր.	8 1/2
« Գոյախիկութեան »	5.26
Կ. Պոլսոյ Պանքային »	6.14
Քրիտի Եֆենիալ »	11 1/2
Քրիտի Օսթրո-Թուրք	—
Երկաթուղեաց հիւս	37. 124 5/8
Փոխ. 1863	» 344
» 1865	» 348
» 1869	» 276 1/2
» 1872	» 85 1/4
» 1873	» 263 1/2
Թրամուէյ	Օսմ. լիւր 4 55

ԵՍՏԱՅԸ ԳՐԱՄՈՑ
11 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Անգլ. լիւր	գոյախիկ	140.20
Նաթիւթի ոսկի »		88
Խմբիսիսի Ռուս »		89 25
Գըրմիս »		51. 27
Հինգ ֆրանք »		—
Հինգիս »		404 25
Պղինձ »		128 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գանի մը պատուարման աղբիւր
յինք կը խնդրեն մեզնէ աղբիւրն
վարչութեան ուղարկութիւնը հրա-
ւերել հայրենիք անուն թերթին
վերջին թիւին մէջ հրատարակուած
նամակի մը վրայ, որոյ մէջ կեղե-
ցական խնդրոյ մ'առնելու նաւամա-
տուցի սրբիկաներու խոյ ներքի չե-
ղած խայտառակ խօսքեր կը տես-
նուին ի նախապէս համատարածութեան

Երեկ վառնէն հետեւեալ հեռա-
գիրն եկաւ մեզ .

Արթին եղիկոպոս եկանտէ պոլս-
նան թալիմաթա մուզայիր պիլա թա-
գիդ վէ թարաֆիկիլիկէ թէշէպպիւսէն
խօտ պէ խօտ խաֆիկէն միւսթէսնա մէ-
ճալիս նասալ , վէ անդղըն գաղամըզտան
մէճանիլէթ էթտիքտէն սօնրա , նըզամիլն
միւթէշէքքիւլ նէվաճի մէճիւրըղըն դայ-
րը մուսաւտաղընր թաշիլիկէն քիլիսա-
լարտա իլան էթտիքտի . պոլսն պոլս մի-
սիլլու նըզամըզ հարաքեթթիլլըն ասլա
գաղաւլ էթմէյէթէ փրօթէսթօ խաշիլիկ .
պոլս պապաէ իգթիլիպի հալըն իճրասընա
սէրետն հիւսնիլթիլի :
7 Գեանուէնի սանի 90

Ճէօմաթթըն խմդա վէքիլի	Պմիրճանեան
Քէրդիպաշեան	Պմիրճանեան
Անանեան	Բարսեղեան
Բէշիլիկեան	Շահպաղեան
Պօլսեան	Տ . Պօղոսեան
Արարըլեան	Մանուկեան
Ալիմ . քալէ մեան	Նաթանեան

Ազգային հմուտ գրագէտ Մեծ .
Ա . Մ . Գարագաշեան էֆէնտին Հա-
յերէն գրաբաւ լեզուի ուսուցման
բանաւոր եղանակը ցուցնելու և հա-
կաւակ կարծիքները ցրելու նպատա-
կաւ հետեւեալ յօդուածը զրկած է
մեզ ի հրատարակութիւն :

Ա . Մ . ԳԵՐԱԳԱՇԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆՆ
ԱՌ Պ . ՍՈՒՐԵՆ

Պ . Սուրեն հրատարակեց Մասի-
սի 1600 և 1601 թիւերուն մէջ մեզի
դէմ պատասխան մը , ուր գարձ-
եալ մինչև երկինք կը բարձրացնէ
իւր միակ միջոցը « լաւ հայերէն ուս-
նելու » այն է գրաբարէ աշխար-
հաբարի թարգմանել : Շատ երկայն
կըլլար մի առ մի պատասխանել Պ .
Սուրենի երկայն և ցամաք փաստա-
բանութեանց , որոնցմէ կուզէ եղ-
րակացնել թէ հայերէն լեզուն ուրիշ
միջոցաւ չիարդուիր , բայց եթէ գրա-
բարէ աշխարհաբար թարգմանելով ,
և այն իւր քերականութեամբ միայն ,
լատ Պ . Սուրենի , « մինչև ցարդ աշ-
խարհաբարին այսքան յառաջնադա-
ցութիւնը գրաբարէ աշխարհաբար
թարգմանութեանց արդիւնքն է »
եղեր . « աշխարհաբարէ ի գրաբար
թարգմանելն ալ օգտակար մաս մ'է »
եղեր : « վարժութեան , բայց այս
կըթուլիւնը գրաբարէ աշխարհա-
բար թարգմանելու վարժութեան ետ-
քը կը լինի » եղեր . « ազգի աշխար-
հաբար անոնք միայն կը գրեն » ե-
ղեր , « որ գրաբարէ աշխարհաբար
թարգմանելու վարժութեան են ի սկըզ-
բանէ : » Վերջապէս , թէ՛ գրաբար
և թէ՛ աշխարհաբար ազգի գրել ,
լատ Պ . Սուրենի , գրաբարէ աշխար-
հաբար թարգմանելով » կը լինի :
« Ասկէ ի հարկէ պիտի հետեւի թէ
Սահակ , Մեսրոպ , Եղիշի իրենց ու-
կեղնիկի հայերէնը գրաբարէ աշ-
խարհաբար թարգմանելով սորվեցան .
նոյնպէս Միսիթարեան վարդապետ-
ները և այլք որ այնչափ երեւելի
գործեր հայերէն գրաբար և աշխար-
հաբար շարադրած և թարգմանած
են » գրաբարէ աշխարհաբար թարգ-
մանելով սորվեցան իրենց հայերէնը .
Մասիսի 1601 թուոյն մէջ Պ . Սուրե-
նի պատասխանէն անմիջապէս ետքը
գրուած գրաբար քերթութեանը գրող
Կ . Ս . Կամիկեան պատահին , Շահ-
նազարեան վարժարանի աշակերտը ,
նոյնպէս գրաբարէ աշխարհաբար
թարգմանելով սորված է հայերէն :
Ինչ պէտք է երկարել , գրաբարէ
աշխարհաբար թարգմանելը Պ . Սու-
րենի փիլիսոփայական քարն է հա-
յերէնի համար , հայերէն լեզուն
քիլիկական համազօրը , այնպէս որ

գրաբարէ աշխարհաբար թարգմա-
նել և « հայերէն ուսնիլ » Պ . Սուրենի
համար միևնոյն բան է :

Գրաբարէ աշխարհաբար թարգ-
մանելով միայն հայերէն չի սորվուի-
որ և իցէ լեզու կը սորվուի այլ և
այլ կըթուլիւնեցնուի . ասոնց մին է
թարգմանելը , բայց ամենէն կարե-
ւոր և գործնական կըթուլիւնը գը-
րելն է : Սակայն թողունք առ այժմ
այս կէտը որ մեր բուն խնդիրը չէ ,
և բուն խնդրոյն գտնէ :

Պ . Սուրեն այնպէս յափշտակուած
է իւր գրաբարէ աշխարհաբար թարգ-
մանելու գրութեան բացարձակ դե-
րադանցութենէն , որ ինչպէս կը
տեսնուի՝ Հասկեցաւ մեր առաջին
յօդուածը : Մեր խօսքը գլխաւո-
րապէս հայերէն սորվելու եղանակին
վրայ չէր և չէ , այս երկրորդական
խնդիր է : Բուն խնդիրը սա է թէ
Հայու մը հայերէն սորվեցնել ինչ ըսել
է . կամ , ուրիշ բառերով բանք , Հայ
մը ինչ բան սորվելով հայերէն սոր-
ված կըլլայ : Ուստի նորէն կը հար-
ցնենք մեր բարեկամին . գրաբարէ
աշխարհաբար թարգմանելով ուսնե-
լու լեզուն ինչ լեզու է : Եթէ ըսէ
թէ աշխարհաբար հայերէն է , մենք ա-
նոր սա համառօտ պատասխանը կու-
տանք թէ մենք աշխարհաբարն իբ-
րեւ չէ հայերէն լեզու չենք ճանչ-
նար . աշխարհաբարն այնպէս հայե-
րէն է՝ ինչպէս գրաբարը : Հայերէն
լեզուն , իւր բառերովը և քերական-
ութեամբը տեսակ մը լեզու է՝ պարս-
կերէնէն , յունարէնէն , լատիներէ-
նէն և ուրիշ լեզուներէ տարբեր .
բայց աշխարհաբար ըսուած լեզուն
հայերէնէն , ինչպէս ուրիշ որ և իցէ
ձև հայերէն մը . զոր օրինակ այս ինչ
գործը կամ հեղինակի լեզուն տար-
բեր լեզու չէ նոյն հայերէնէն : Հա-
յերէնը , Դասակ (նորմալ , քաղաք)
հայերէնը , իբրեւ տեսակ մը լեզու
իւր բառերովը ու քերականութեամբ
ը , ի սկզբանէ մինչև ցարդ գրե-
թէ ամէն գարու մէջ նա մանաւանդ
ամէն մատենագրի գրչի տակ , քիչ
չատ տարբեր և օտար ձևեր առած
են Դարու մը կամ մատենագրի մը
լեզունն օտարութիւնները կամ տար-
բերութիւնները՝ ո՛րչափ կուզուին
լատ գաղական հայերէնի , այնչափ լե-
զուն մաքուր և ուղիղ հայերէն կըլլայ .
սակայն ոչ ի՞նչայ գաղական հայե-
րէնէն օտար կամ տարբեր տարրե-
րով խառն հայերէն մը , բայց ոչ հա-
յերէնէն տարբեր լեզու մը : Դասական
հայերէնէն օտար տարրեր կամ ձե-
ւեր կան ոչ միայն մեր աշխարհաբար
լեզունն մէջ , այլ և անցեալ դարեւ
լու հայերէններուն մէջ՝ զոր մենք
գրաբարէ կը կոչենք . բայց ասոր հա-
մար չենք կրնար ըսել թէ անցեալ
դարերու հայերէնները հայերէնէն տար-
բեր մէյակի լեզու են : Եւ երբ մէկը
մանաւանդ հայ մը , հայերէն կուզէ
սորվիլ , ինչպէս որ այս ինչ գործը
կամ մատենագրի լեզուն չի սորվի ,
այլ Դասական հայերէնը կը սորվի անոր
բառերովը ու քերականութեամբը ,
և իւրաքանչիւր գարու և մատե-
նագրի հայերէնն այն գաղական հա-
յերէնին հետ բաղդատելով կը հաս-
կնայ տարբերութիւնը , նոյնպէս հի-
մայ հայերէն սորվիլ ուղղով հայ մը
գաղական հայերէնը սորվելու է . գա-
ղական հայերէնը սորվելէն ետքը ,
իւր աշխարհաբարն անոր հետ բաղ-
դատելով կրնայ հասկնալ թէ ինչ է
երկուքին մէջ տեղ եղած տարբերու-
թիւնը , և թէ ինչ ընել պէտք է :

Չենք գիտեր , կրցանք արդեօք
հասկնել հայերէնի վրայ մեր գա-
ղաբարը Դարձեալ կրնենք մեր գա-

ղափարն է որ Հայ մը Դասական հայե-
րէնը սորվելու է , և ոչ այս ինչ գա-
ղու , այս ինչ մատենագրի կամ այս
ինչ ձև հայերէն , զոր օրինակ Պօլսոյ
կամ Ռուսի աշխարհաբար : Քերա-
կանութիւնները զորս մեք մինչև ցարդ
յօրինեցաք՝ այն գաղական հայերէնը
սորվեցնելու համար են , և ոչ այս ինչ
ձև հայերէն : Ըստ մեզ՝ հայու մը հա-
մար մանաւոր հայերէն մը սորվիլ
պէտք չէ , այլ պէտք է և բաւական
է գաղական հայերէնը միայն սորվիլ .
սակայն ոչ , ոչ թէ Հայերէն , այլ այս
ինչ ձև հայերէն միայն սորված կըլ-
լայ :

Հայերէն և հայերէն սորվիլ ինչ
ըլլալը սահմանած ըլլալով , դանք հի-
մա դայն ուսուցանելու եղանակին
կամ մէթոտին :

Ահա Պ . Սուրենի հայերէն սոր-
վեցնելու մէթոտը : Պ . Սուրեն կուզէ
և կարեւոր կը համարի որ իւր աշա-
կանները գրաբարի ամբողջ քերա-
կանութիւնը սորվին այս լեզուն հա-
մար համար միայն , որպէս զի
գրաբարէն աշխարհաբար թարգմա-
նեն , և ոչ թէ աշխարհաբարէ գրա-
բար : Զորօրինակ , կուզէ որ աշա-
կանը գիտնայ թէ լաւ նախագրու-
թիւնը գործնականով կը նշանակէ
Դասական , որպէս զի , երբ կը տեսնէ
« ընդ ծառով » , թարգմանէ « ծա-
ռին տակ » :

Հոս կը հարցնենք նախ Պ . Սու-
րենի թէ « ընդ ծառով » « ծառին
տակ » թարգմանողը չի՞ կրնար « ծա-
ռին տակ » ալ « ընդ ծառով »
թարգմանել . ինչ պատճառ կայ ա-
ռաջնոյն համար հրաման տալ , և
երկրորդին համար չտալ . այսպէս ի-
մանալու է բոլոր լեզուին համար :
Ամենին պատճառ չկայ գաղական
լեզուն բոլոր քերականութիւնը ,
կամ որ նոյն է Պ . Սուրենի բառե-
րով , « գրաբարը հասկնալ » սորվե-
ցնելէն ետքը , գրաբարէ աշխար-
հաբար միայն թարգմանել տալ և
ոչ աշխարհաբարէ գրաբար : Երկ-
րորդ կը հարցնենք թէ , եթէ աշա-
կանը և գրեւ , ինչպէս որ իրօք
ալ , գտնէ ընդհանրապէս , այնպէս
է , ինչ հարկ կայ գրաբարի քերա-
կանութիւնը կամ գրաբար հասկնալ
սորվեցնել . ինչ հարկ կայ տղուն ,
որ « ծառին տակ » ինչ ըսել է՝ գի-
տնէ , « ընդ ծառով » սորվիլ , քանի
որ այս վերջինը պիտի չգործածէ :
Ինչ որ գործնական կարեւորութիւն
մը չունի՝ բոլորովին աւելորդ է : Բո-
լորովին աւելորդ է տղուն համար
գրաբարը , եթէ այն արդիւնեալ ծառ
պիտի ըլլայ անոր :

Մեր այս հարցման Պ . Սուրենի
պատասխանը սա է թէ հայերէն
գրաբար գիտնալ հարկաւոր է , վասն
զի անով աշխարհաբարն « անճառնի
տառակաւանութիւնները կը վերնան ,
աշխարհաբարը գրաբարով կը ճո-
խանայ , կաղնուանայ , կը ճշգուի ,
կը կանխաւորուի » , այլովքն հան-
դերձ : Ասանք գրաբարին օգուտ-
ներն են . բայց գրաբարը , այսինքն
այն հայերէնը զոր մենք գաղական
կուցենք , ոչ միայն օգտակար , այլև
հարկաւոր է , և անոր հարկաւորու-
թիւնը սա է որ , այն է քերականագիտ-
հայերէն , այսինքն դայն սորվելով
միայն հայերէն սորված կըլլանք :
Հայերէն սորվիլ մեզի կամ պէտք է
կամ ոչ . եթէ պէտք չէ , ըսելիք
չունինք . իսկ եթէ պէտք է , պէտք
է ուրեմն որ գաղական հայերէնը
սորվինք , քանզի այն է հայերէն ,
և դայն սորվելով միայն հայերէն
սորված կըլլանք : Հայ ազգն իբր
բնական աղբամամ գիտնալով դայն ,

միշտ գրաբարը սորվեցուցած է և
տակաւին կը սորվեցնէ գաղոցաց
մէջ :

Պ . Սուրեն իւր քերականութեան
յառաջաբանին մէջ ըսած էր թէ աղ-
բային վարժարանաց մէջ հայերէն
լեզուի ուսուցման մասին ոչ միևնոյն
տիրող գրութիւնն է գրաբարը հաս-
կնելու , աշխարհաբարը գրելու : Այս
անգամ կուզէ իւր սխալը : « Արդա-
րեւ , կրնէ , աղբային վարժարանաց
մէջ գրաբար լեզուի ուսումը պէտք
է որ կարելի չեղածին չափ զարգա-
նայ , քանզի ոչ ոք կուրանայ թէ Հայ
վարժարաններն , իբրեւ աղբային
վարժարան , գրաբարի ուսմանը նա-
խապատուութիւն ընծայած են միշտ ,
և գրաբարը հոն բացարձակապէս և
առանց սեղմման կուսուցուի » : Բայց
կը յաւելու թէ Պօլսոյ և գաղաւազ
երկրորդական կամ նախակրթական
գաղոցները բաղդատելի չեն վար-
ժարանաց հետ . այս նախակրթական
գաղոցաց մէջ հայերէնը սեղմմամբ
պէտք է սորվեցնել , այսինքն գրա-
բարը հասկնալ , աշխարհաբարը գը-
րել : Մենք չէինք գիտեր թէ Պ .
Սուրեն վարժարան ըսելով նախակր-
թական գաղոց կը հասկնար : Բայց
ամեն գաղոցի համար , թէ՛ վարժա-
րան ըլլայ և թէ՛ երկրորդական կամ
նախակրթական գաղոց , հայերէնի
ուսումը մի և նոյն է . տարբերու-
թիւնն ըստ Դասականութեան միայն է և
ոչ ըստ Դասականութեան . այսինքն , թէ՛
վարժարանի և թէ՛ գաղոցի աշա-
կանը մի և նոյն հայերէնը , գաղա-
կան հայերէնը պիտի սորվին , իբրեւ
գրեւ , իբրեւ հասկնալուն կըթուլիւնն
է , անկէ տարբեր բան մը չէ . ինչ-
պէս որ խօսինք ալ հասկնալուն ուրիշ
մէկ կըթուլիւնն է , անկէ տարբեր
բան մը չէ . և գաղական հայերէնը
գիտողը Հայու մը համար իւր աշ-
խարհաբարը դատ գրել սորվիլ հարկ
չէ . գաղական հայերէնը գիտողը մը
աշխարհաբար կը գրէ , եթէ ունի
գրելու յատկութիւնը , որ հմուտ
թեան , ճաշակի և ուշադրութեան
վրայ կը կայանայ :

Ուստի մեր եղրակացութիւնը ,
միանգամայն սկզբունքն է . Դասական
հայերէնն Դասական , Բոլոր աղբայն Դասական
նշանակէ , ոչ ինչայ Դասական և ոչ Դաս-
ական . գաղական հայերէնը չորսվե-
ցնելու հայերէն չորսվեցնել է : Գրա-
բարը հասկնալ , աշխարհաբարը գը-
րելու սկզբունքը բոլորովին անիմաստ
է : Տղայ մը ո՛րչափ կը հասկնայ գաղա-
կան հայերէնը , նոյնչափ նաև կրնայ
գրել . գրելը հասկնալուն կըթուլիւնն
է , անկէ տարբեր բան մը չէ . ինչ-
պէս որ խօսինք ալ հասկնալուն ուրիշ
մէկ կըթուլիւնն է , անկէ տարբեր
բան մը չէ . և գաղական հայերէնը
գիտողը Հայու մը համար իւր աշ-
խարհաբարը դատ գրել սորվիլ հարկ
չէ . գաղական հայերէնը գիտողը մը
աշխարհաբար կը գրէ , եթէ ունի
գրելու յատկութիւնը , որ հմուտ
թեան , ճաշակի և ուշադրութեան
վրայ կը կայանայ :

Դանք հիմա Պ . Սուրենի պատաս-
խանին վերջին մասին Ըստ Պ . Սուրե-
նի , մեր քերականութեան մէջ եթէ
արժէք ունեցող բան մը կայ , այն ալ
Հայր Արքեպիսկոպոսի Հայերէն և Շարապի
Գաղղիերէն քերականութիւններէն
առնուած մասերն են եղեր : Այս խօս-
քը մենք ըսած էինք Պ . Սուրենի քե-
րականութեան համար , որ իրօք ու-
րիշ բան չէ՝ եթէ ոչ ծայրէ ի ծայր
մեր քերականութեան ընդօրինա-
կութիւնը : Այնպէս ստուգելու համար
բաւական է մեր գործնական քերա-
կանութեան , ի մէջ այլոց , էջ 159 և
160 , սեռական և տրական տէր բա-
յի կանոնները բաղդատել Պ . Սու-
րենի քերականութեան 135 — 137
թիւերուն հետ : Եթէ Պ . Սուրեն այս
և ասոնց նմանները Հայր Արքեպիսկոպոսի
Շարապի քերականութեան մէջ կըր-
նայ ցուցնել , մենք կընդունինք թէ մեր
քերականութեան մէջ եթէ արժէք
ունեցող բան մը կայ , Հայր Արքեպիսկոպոսի և
